րում շինվեց գավիթը: Այս իմացանք արձանագրություններից: Սրան կաթողիկոսը աղերսագիր ուղարկեց:

**Ժ.** Յոթ հարյուր քսանութ (1279) թվին վանահայր եղավ Համազասպը:

Այս Համազասպը մեծ գործեր արեց, բազմացրեց աստվածային (կրոնական) գրքերը, որոնցից շատերը կան դեռևս: Սա էր իշխան Քուրտի որդու օրերում և վարում էր մարմնավոր իշխանության առաջնորդությունը, իսկ ինքը Մամիկոնյան տոհմից էր, փառահեղ և տեսնողներին ահազդու մարդ էր: Այս իմացանք բազմաթիվ գրքերի հիշատակարաններից և բազմաթիվ տեղերի արձանագրություններից:

**ԺԱ.** Յոթ հարյուր վաթսուն (1311) թվին վանահայր եղավ Վասիլը: Այս սովորեցինք խաչի արձանագրություններից, որի վրա գրված էր՝ Օհանավանքի վանահայր Վասիլը՝ Շիրակի և ամբողջ Անբերդի առաջնորդը, հիշեցեք Քրիստոսով յոթ հարյուր վաթսուն (1311) թվին:

**ԺԲ.** Յոթ հարյուր վաթսունյոթ (1318) թվին վանահայր եղավ Ներսեսը: Սա Համազասպի ազգականն էր: Այս իմացանք գրքերի հիշատակարաններից, գրքեր, որոնք ինքը գրել տվեց, և նրա գրքերից շատերը մեզ մոտ կան:

**ԺԳ.** Ութ հարյուր մեկ (1352) թվին վանահայր եղավ հայր Աբրահամը: Սրա օրերում ամեն ինչ ընդհանուր էր, ոչ ոք առանձին բան չստացավ: Այս իմացանք եկեղեցու արձանագրություններից:

**ԺԴ.** Ութ հարյուր իննսուն (1441) թվին վանահայր եղավ Կարապետը: Սրա օրոք Սուրբ Էջմիածինը նորոգվեց: Կաթողիկոս դարձավ Կիրակոս Վիրապեցի ճգնավորը: Սրա օրերում Օհանավանքի վանահայր Հովհաննեսը հաստատվեց Սուրբ Էջմիածնի աթոռակալ և ամեն ինչից տասանորդ էր հանում և տալիս Օհանավանքին: Այս իմացանք Թովմա պատմագրից և Առաքել վարդապետից: Մենք նրան օգնում էինք սրբագրելիս և գրքեր կարդալիս, այդ պատճառով հարցնում էինք նրան, իսկ նա պատասխանում էր: Այս էլ իմացանք նրանից, թե տասանորդը եկել է Օհանավանք:

**ԺԵ.** Ութ հարյուր իննսուներկու (1443) թվին վանահայր եղան Գաբրիել Վաղարշապատեցին և Հոհան վարդապետը: Սրանք Սուրբ Էջմիածնում աթոռակալներ էին: Սրանք անմարդկայնություն արին ուխտավորների նկատմամբ, այդ պատճառով դժգոհ մնալով դրանցից՝ մեծ բազմությամբ ժողով արին և հալածեցին սուրբ կաթողիկոս Կիրակոսին և կաթողիկոս դրին Մակվեցի Գրիգոր եպիսկոպոսին: Այս իմացանք Թովմա պատմագրից: Այս Գաբրիելը գրչագիր էր, գրեց բազմաթիվ գրքեր՝ Հայսմավուրք, Ճաշոց, Գանձարան, Շարակնոց: Նրա գրած գրքերը ահա շատ տեղերում երևում են:

**ԺԶ.** ....Թվին (թիվը պակասում է) վանահայր եղավ Օհանավանքի և Բջնու Գրիգորը. սա նույն Բջնի գյուղից էր և վանահայր էր երկու վանքերի: Սա բազմաթիվ գրքեր գրել տվեց, ահա այս իմացանք գրքերից:

**ԺԷ.** ...Թվին (պակասում է թիվը) վանահայր եղավ հայր Խաչատուրը, որի մականունն էր Ալթիղոլաջ: Սա մի ջրաղաց շինեց և երկու ձիթհան մի տան մեջ իր Քասաղ գյուղում և հիշատակ տվեց Սուրբ Կարապետին: Այժմ ջրաղացը շեն է և կոչվում է Խրխնջան: Այս իմացանք Գայլ եպիսկոպոսից, որ նախապես գրել ենք:

**ԺԸ.** ...Թվին (պակասում է թիվը) վանահայր եղավ Նահապետը: Նա Նիգից էր, բայց եղավ Օհանավանքի, Սաղմոսավանքի, Ուշու վանքի վանահայր: Սա շատ գրքեր ավելացրեց Սաղմոսավանքում: Այս իմացանք նույն Գայլից:

**ԺԹ.** ...Թվին (պակասում է թիվը) վանահայր եղավ Մկրտիչը. սա գտանք բանաղրանքի թղթից, բայց չգիտենք որ ժամանակ:

**Ի.** Հազար տասնինը (1570) թվին վանահայր եղավ Գրիգոր վարդապետ Կարբեցին: Սա այն Գրիգորն էր, որին առաջինը հիշատակեցինք: Այս իմացանք Գալուստ անունով մի բարեպաշտ քրիստոնյայից, որ հիշեցինք նախապես այս Գրիգորի համար և քննեցինք թիվը, այն էր, ինչ գրեցինք:

**ԻԱ.** Հազար քառասուներկու (1593) թվին վանահայր դարձավ Մատթեոսը. սա եկեղեցու գավթում մի խաչ կանգնեցրեց. խոհեմ ու երկյուղած մարդ էր: Այս իմացանք Ավետարանի հիշատակարանից:

**ԻԲ.** Հազար քառասունութ (1599) թվին Օհանավանքի, Տեղերի վանքի վանահայր եղավ Ղուկասը: Սա մի ավետարան գրեց և իբրև հիշատակ դրեց Օհանավանքում, այժմ (այդ ավետարանը) Փարպի գյուղում է: Այս իմացանք նույն Ավետարանից: